



ԵՂՎԱՐԴԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ
ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF YEGHVARD

ք. Եղվարդ, Երևանյան 1
հեռ. (0224) 2-29-33 ,094331055
Էլ. հասցե: info_yeghvard@aarhus.am
Վեբ www.aarhus.am

Yeghvard c.,1 Yerevanyan st.,
Tel. (+374) 224 22933, 094331055
E-mail info_yeghvard@aarhus.am

№ՍԱ-70

29.09.2015թ.

<<Գետամեջի թռչնաֆաբրիկա>> ՄՊԸ տնօրեն
Ռ. Սարգսյան
Եղվարդի Օրհուս կենտրոնի համակարգող
Ռ. Մանյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի Ռ. Սարգսյան

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27-րդ, 27.1 հոդվածների, ՀՀ կողմից Վավերացված Օրհուսի համաձայնագրի և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք Եղվարդի Օրհուս կենտրոնին տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

- Արդյոք Ձեր կազմակերպությունը գործում է «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի և 22-րդ հոդվածի 1-ին մասի նորմերի համաձայն:
- Ձեր կազմակերպության գործունեության շրջանակներում նախատեսված են արդյոք շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության չթողնելու կամ շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ծրագրեր կամ միջոցառումներ:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում ենք մեր հարցմանը պատասխանել 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջվող տեղեկատվության/30 օրյա ժամկետ/:

Կազմակերպությունը պատրաստ է տեղեկության պատճենահանման յուրաքանչյուր էջի համարվ վճարել 10 դրամ կամ տրամադրել որևէ կրիչ՝ էլեկտրոնային տարբերակով տեղեկության ստացման համար (եթե տրամադրվող տեղեկատվությունը գերզանցում է 10 էջը):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Եղվարդի Օրհուս կենտրոնի
Համակարգող Ռ. Մանյան